«Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց»
ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Երեխայի իրավունքների արտացոլումը և պաշտպանությունը զինված ընդհարումների ժամանակ**

Ուսուցիչ՝ Հերիքնազ Գևորգյան

Ղեկավար՝ Ռուզան Բարսեղյան

Եղեգնաձոր 2022

Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու իր յուրահատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան, քան նրանց այդ ունակությունը մեր փորձով փոխարինելու փորձը:

Ժան Ժակ Ռուսո

Բովանդակություն

Թեմայի նպատակը,խնդիրները 4

Առաջաբան.....5

Երեխայի իրավունքների կարևորությունը....6

Կոնվենցիա Երեխաների իրավունքների մասին..7-12

Պատմության մարդասիրական նորմեր.....12-13

Ադրբեջանի իրավախախտումները ԼՂՀ-ում...14-16

Պատերազմի երեխաները.....17-18

Խոսում են տվյալները.....18-19

Մեզ հյուր է հոգեբանը.....19-20

Պատերազմը և դեռահասը.....20

Եզրակացություն.....21

Առաջարկություններ.....22

Օգտագործված գրականություն.....23

Կիրառված էլ.ռեսուրսներ..... 23

Նպատակներ և խնդիրներ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Զինված ընդհարումների ժամանակ Երեխաների իրավունքների մասին իրազեկվածության աստիճանի բարձրացում
- Ուսումնասիրել երեխաների իրազեկվածության մակարդակը իրենց իրավունքների մասին,մասնավորապես `զինված ընդհարումների առընչությամբ:
- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին.

ԽՆԴԻՐՆԵՐ

- Երեխայի իրավունքների ուսումնասիրում
- Իմանա հասարակական վարքի կանոնները, իր իրավունքներն ու պարտականությունները.
- Պաշտպանել սեփական իրավունքներն ու շահերը
- Բացահայտել Երեխայի իրավունքների մասին եղած իրավական փաստաթղթերի ամենակարևոր կետերը`զինված ընդհարումների մասով:
- Ունենալ գործուն հասարակական դիրքորոշում և գործնականում կիրառել
- Հանդես բերել նախաձեռնություն և քաղաքացիական պատասխանատվություն.
- Ընդունել և իրագործել ինքնատիպ ու անկախ որոշումներ՝ տարբեր իրավիճակներում:
- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին.

ԱՌԱՋԱԲԱՆ

Յուրաքանչյուր նորաստեղծ ընտանիքի գերագույն նպատակը զավակ ունենալն ու նրան երջանիկ մեծացնելն է:Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության,առողջության,լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

Երեխաները և երիտասարդները օժտված են մարդկային միևնույն ընդհանուր իրավունքներով, ինչպես նաև հատուկ իրավունքներով, որոնցով ճանաչվում են նրանց հատուկ կարիքները: Երեխաները իրենց ծնողների սեփականությունը չեն,ոչ էլ անօգնական օբեկտներ:Նրանք անհատներ են,ունեն ընտանիքի մյուս անդամների կարգավիճակին հավասար կարգավիճակ:Լուսաբանելով երեխայի իրավունքները,մենք մշտապես պահում ենք նրանց ուշադրության կենտրոնում,մեկ անգամ ևս փաստելով,որ ապագան իրենցն է:Ճիշտ է,երեխաների իրավունքների մասին իրավական փաստաթղթեր շատ կան և կանոնակարգում են նրանց կարգավիճակը,բայց ընդունենք,որ այսօր դրանք երբեմն չեն ծառայում իրենց նպատակին ՝ ոտնահարելով իրենց իրավունքները,զրկում պաշտպանվելու հնարավորությունից:Դա հատկապես ակնառու է դառնում զինված ընդհարումների ժամանակ ,երբ մեր երեխաները դառնում են շատ խոցելի,ու,ցավոք,շատ հաճախ, անպաշտպան:Այնուհանդերձ, Երեխայի իրավունքները ունեն զարգացած, իրար հաջորդող խոշոր իրադարձային փուլեր, որոնց մեծ մասը դարձել է մեր արդի իրավունքի հիմքը, հիմնական բովանդակությունը:

Երեխայի իրավունքների կարևորությունը

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեխաների իրավունքները մարդու իրավունքներին վերաբերող առանձին Կոնվենցիայով ընդգծելու համար բազմաթիվ պատճառներ կան՝

- **Երեխաները կյանքն սկսում են որպես միանգամայն կախյալ էակներ**
- **Երեխաների տեսակետները պետք է լսվեն և հաշվի առնվեն քաղաքական գործընթացներում**
- **Հասարակությունում տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններ անհամաչափ, հաճախ՝ բացասական ներգործություն են ունենում երեխաների վրա**
- **Երեխաների առողջ զարգացումը վճռորոշ նշանակություն ունի ցանկացած հասարակության ապագա բարեկեցության հարցում**
- **Երեխաների հարցում թերացող հասարակությունը խիստ թանկ է վճարում դրա դիմաց**

Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա[1]

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

(20 նոյեմբերի 1989 թ.)

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,

հիշելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակել է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օժանդակության իրավունք,

համոզված լինելով, որ ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի, և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի կարողանա լիարժեք կերպով ստանձնել իր պարտականությունները հասարակության շրջանակներում,

ճանաչելով, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում,

համարելով, որ երեխան լիարժեք կերպով պետք է նախապատրաստվի հասարակության մեջ անհատական կյանքով ապրելուն և դաստիարակվի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված իդեալների և հատկապես խաղաղության, արժանապատվության, հանդուրժողականության, ազատության, հավասարության և համերաշխության ոգով,

հաշվի առնելով, որ երեխային այդպիսի հատուկ հոգածություն տրամադրելու անհրաժեշտությունը նախատեսված է Երեխայի իրավունքների 1924թ. Ժնևի հռչակագրում և 1959թ. նոյեմբերի 20-ին Գլխավոր ասամբլեայի ընդունած

[1] Երեխայի իրավունքների մասին - Arlis

Երեխայի իրավունքների հռչակագրում և ճանաչված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում (մասնավորապես 23 և 24-րդ հոդվածներում), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (մասնավորապես 10-րդ հոդվածում), ինչպես նաև երեխաների բարեկեցության հարցերով զբաղվող հատուկ մասնագիտացված հաստատությունների և միջազգային կազմակերպությունների կանոնադրություններում և համապատասխան փաստաթղթերում,

հաշվի առնելով, որ ըստ Երեխայի իրավունքների հռչակագրի՝ «երեխան, նկատի ունենալով նրա ֆիզիկական և մտավոր անհասունությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո»,

վկայակոչելով Երեխաների պաշտպանության և բարեկեցության՝ հատկապես ներպետական և միջազգային մակարդակով երեխաների խնամակալության սահմանման և որդեգրման ժամանակ, սոցիալական և իրավական սկզբունքների մասին հռչակագրի, Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») և Արտակարգ իրավիճակներում ու զինված ընդհարումների ժամանակ կանանց և երեխաների պաշտպանության մասին հռչակագրի դրույթները,

ընդունելով, որ աշխարհի բոլոր երկրներում կան բացառիկ ծանր պայմաններում ապրող երեխաներ և այդ երեխաները կարիք ունեն հատուկ ուշադրության,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հ ո դ վ ա ծ 1

Հոդված 7

Հաշմանդամություն ունեցող երեխաները

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող երեխաների՝ մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը:

2. Հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում երեխայի բարձրագույն շահերը համարվում են առաջնահերթ:

3. Մասնակից պետությունները հաշմանդամություն ունեցող երեխաներին ապահովում են իրենց վերաբերող հարցերի շուրջ կարծիքներն ազատ արտահայտելու իրավունքով, նրանց տեսակետներին տրվում է տարիքին ու հասունությանը համապատասխան կշիռ մյուս երեխաներին հավասար հիմունքներով, և այդ իրավունքն իրականացնելու համար տրամադրվում է հաշմանդամությանը անհրաժեշտ ու տարիքին համապատասխան աջակցություն:

Հ ո դ վ ա ծ 28

1. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի կրթության իրավունքը և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես.

(ա) մտցնում են պարտադիր և անվճար տարրական կրթություն,

(բ) խրախուսում են միջնակարգ կրթության տարբեր ձևերի, ներառյալ՝ ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացումը, ապահովում են դրանց մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն տրամադրելը և կարիքի դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը,

(գ) բոլոր համապատասխան միջոցներով ապահովում են բարձրագույն կրթության մատչելիությունը՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների,

(դ) ապահովում են կրթական և մասնագիտական տեղեկատվության և ուղեցույցների մատչելիությունը բոլոր երեխաների համար,

(ե) միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելուն և դպրոցը թողած սովորողների թվաքանակի նվազմանը:

Հ ո դ վ ա ծ 22

1. Մասնակից պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի փախստականի կարգավիճակ հայցող կամ գործող միջազգային կամ ներպետական իրավունքի ու ընթացակարգի համաձայն փախստական համարվող երեխային, ինչպես ծնողների կամ ցանկացած այլ անձանց կողմից ուղեկցվելու, այնպես էլ չուղեկցվելու դեպքում, ապահովվի պատշաճ պաշտպանություն և մարդասիրական օգնություն՝ սույն Կոնվենցիայում և տվյալ պետությունների մասնակցությամբ մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային կամ մարդասիրական փաստաթղթերում ամրագրված կիրառելի իրավունքներից օգտվելիս:

Հ ո դ վ ա ծ 38

1. Մասնակից պետությունները պարտավորվում են հարգել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, որոնք կիրառվում են զինված ընդհարումների դեպքում և առնչվում են երեխաներին, և ապահովել դրանց նկատմամբ հարգանքը:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու, որպեսզի տասնհինգ տարին չլրացած անձինք ուղղակի մասնակցություն չունենան մարտական գործողություններին:

3. Մասնակից պետությունները ձեռնպահ են մնում տասնհինգ տարին չլրացած ցանկացած անձի՝ իրենց զինված ուժերում ծառայության զորակոչելուց: Տասնհինգ տարին լրացած, բայց դեռ տասնութ տարին չլրացած անձանց թվից զորակոչելիս՝ մասնակից պետությունները ձգտում են նախապատվություն տալ ավելի բարձր տարիք ունեցողներին:

4. Զինված ընդհարումների ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության առթիվ միջազգային մարդասիրական իրավունքով, իրենց ստանձնած պարտավորությունների համաձայն, մասնակից պետությունները պարտավորվում են ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ զինված

ընդհարումից տուժող երեխաների պաշտպանությունն ու խնամքն ապահովելու նպատակով:

Այսպիսով,վերը գրվածից պարզ է դառնում,որ արգելվում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին,զինված ընդհարումներին,նաև երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությունը,մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը:

Զինված հակամարտությունների ժամանակ պետություններն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը:

Պատմության մարդասիրական նորմեր

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ[2]

Անգամ կոտորածների ամենաթեժ պահերին, այնուամենայնիվ, եղել են մարդասիրական նորմերի հաճախակի արտահայտություններ և կոչեր պաշտպանելու զինված ընդհարումների տուժածներին՝ վիրավորներին, հիվանդներին և երեխաներին: Դա եկել է դեռևս հնագույն ժամանակներից:

Իսլամական իրավունքը սահմանում է, որ «ոչ կոմբատանտները, ովքեր չեն մասնակցում պայքարին, ինչպիսիք են կանայք, երեխաները, վանականներն ու ճգնավորները, տարեցները, կույրերը և խելագարները» չպետք է չարչարանքի ենթարկվեն: Առաջին խալիֆ Աբու Բաքրը հայտարարել է. «Մի՛ վնասեք: Մի՛ սպանեք փոքր երեխաներին կամ տարեց մարդկանց:

[2] https://www.osf.am/

Հին կտակարանում Իսրայելի թագավորը, հետևելով Եղիսե մարգարեի հորդորին խնայել թշնամու բանտարկյալներին, կանխում է նրանց կոտորածը:

Հին Հնդկաստանում կային արձանագրություններ (օրինակ՝ Մանուի օրենքները), որոնք ներկայացնում էին զենքերի տեսակները, որոնք չպետք է կիրառվեին. «Երբ նա մարտ է վարում իր թշնամիների հետ, թող նա չհարվածի քողարկված զենքով, և ոչ փշոտ, թունավորած զենքով կամ զենքով, որը բոցավառվում է կրակով»: Կար նաև հրաման չվնասել ներքինիներին, ինչպես նաև հակառակորդին, ով «ձեռքերն աղաչանքով է ծալում... ով քնած է, ով կորցրել է զրահաբաճկոնը, ով մերկ է, ով անզեն է, ով նայում է առանց պայքարին մասնակցելու»

Իսլամական իրավունքը, այնուամենայնիվ, չէր խնայում բոլոր ոչ կոմբատանտներին: Այն անձանց դեպքում, ովքեր մերժում էին ընդունել իսլամ կամ վճարել այլընտրանքային հարկ, մուսուլմաններին «թույլատրվում էր սպանել նրանցից յուրաքանչյուրին

Վերը նշվածի օրինակ է հայոց ցեղասպանության ժամանակ թալեաթի հրամանն այն մասին,որով պիտի կոտորեին անգամ օրորոցներում եղած տղա երեխաներին,հետագա վրեժից խուսափելու համար:

Հատված

<Արտույտների ագարակը>ֆիլմից:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

2020 թ.Ադբեջանը իր հերթական արյունարբու դավերը նյութեց մեր հայրենիքի,Արցախ աշխարհի դեմ,ինչի պտուղները շատ դառն էին: Եվ ինչպես հետո պիտի ցույց տար վիճակագրությունը, հետևանքները շատ դաժան էին մեզ համար ինչպես մարդկային,այնպես էլ նյութական,տարածքային առումներով:Այս ամենի մեջ անմասն չմնացին երեխաները,ովքեր լինելով շատ անօգնական ու անպաշտպան,երբեմն հերոսական փայլուն սխրանքներով աչքի ընկան:Ադրբեջանը ռմբակոծել է ԼՂՀ Մարտակերտ19 և Մարտունի քաղաքները, Թալիշ և Մատաղիս գյուղերը, Քարվաճառը, այլ բնակավայրեր, որի արդյունքում զոհվել և վիրավորվել են խաղաղ բնակիչներ, այդ թվում նաև՝ երեխաներ:

Երեխաները պատերազմի ընթացքում Արցախի գյուղական և քաղաքային բնակավայրերում ոչ միայն զրկված են եղել կրթության իրավունքից, այլ նաև մշտապես ապրել են մահվան վախի պայմաններում, անգամ երբ ապաստարաններում են գտնվել:

Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալներով՝ հարձակումների հետևանքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախ) 24,000 երեխա զրկված է եղել կրթություն ստանալու և դպրոց հաճախելու որևէ հնարավորությունից: Դրանից զատ, Հայաստանի Հանրապետության 119 սահմանամերձ համայնքներում բնակվող ավելի քան 10,815 երեխա կյանքի համար վտանգավոր պայմանների պատճառով զրկված է եղել դպրոց և մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից:

Մինչդեռ՝

«Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» 12.08.1949թ.-ի ժնևի 4-րդ կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ (…) սույն Կոնվենցիան կկիրառվի հայտարարված պատերազմի և ամեն մի այլ զինված կոնֆլիկտի դեպքում, որ ծագում է երկու կամ մի քանի Բարձր Պայմանավորվող Կողմերի միջև, անգամ այն դեպքում, եթե դրանցից մեկն ու

մեկը չի ընդունում պատերազմական վիճակը: Եթե կոնֆլիկտի մեջ մտնող տերություններից մեկը չի հանդիսանում սույն կոնվենցիայի մասնակից, այնուամենայնիվ, դրա մասնակից տերությունները իրենց փոխհարաբերություններում մնում են Կոնվենցիայով կապված: Ինչ է սա ենթադրում,որ եթե նույնիսկ ԼՂՀ-ը չի հանդիսանում վերոնշյալ կոնվենցիայի մասնակից պետություն, այնուամենայնիվ Ադրբեջանը պարտավոր է պահել կոնվենցիայի նորմերը:

Այստեղ տեղին է փաստել,որ չնայած իրավական նորմերի առկայությանը, երեխաները, այնուամենայնիվ, հայտնվեցին Ադրբեջանի լայնամասշտաբ ռազմական ագրեսիայի թիրախում: Ծարունակաբար ոտնահարվում էին նրանց հիմնարար իրավունքները՝ կյանքի և առողջության, ընտանիքի ու համայնքի հետ լինելու և այլ իրավունքներ:
Պատերազմի ավարտի օրը՝ նոյեմբերի 9-ին, Արցախի ՄԻՊ-ի կողմից հրապարակվեց հատուկ զեկույց՝ երեխաների իրավունքների ոտնահարումների վերաբերյալ: Փաստագրված տվյալների համաձայն՝ թշնամին արգելված կասետային զենքերով և բարձր ճշգրտության հրթիռներով թիրախավորել է դպրոցներ, մանկապարտեզներ, և այլ շինություններ, որոնք նաև երեխաներին սպասարկող քաղաքացիական օբյեկտներ են եղել:

Օրինակ, կրկնակի ռմբակոծվեց և նյութական վնասներ կրեց Ստեփանակերտի մոր և մանկան առողջության կենտրոնը (հոկտեմբերի 28-ին և նոյեմբերի 3-ին): Երկու անգամ թիրախավորվեց նաև Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին: «Հրատապ հետաքննության ընթացքում ձեռքբերված ապացույցները հիմք են տալիս եզրակացնելու, որ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց վանքի վրա օդային հարվածները հասցվել են տաճարին ավերածություն պատճառելու և նկուղում ապաստան գտած երեխաների, կանանց և տարեցների մահվան պատճառ դառնալու և այդպիսով խաղաղ բնակիչներին կանխամտածված կերպով սպանելու նպատակով»: Արցախի ՄԻՊ զեկույցում ընդգծվում է նաև, որ եկեղեցու մերձակայքում ռազմական օբյեկտներ չկան, և կիրառվել են բարձր ճշգրտության հրթիռներ: Պատերազմը ծանր հետևանքներ է ունեցել երեխաների ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեկան առողջության համար: Երեխաներ, որ ծնող

են կորցրել, հարազատ տուն, բնականոն կյանք և, ի վերջո, նայել մահվան աչքերին...

Այս երեխաներից շատերը տրավմաներ կունենան իրենց ողջ կյանքի ընթացքում: Կան փաստագրված դեպքեր, երբ դեռահասները ստիպված են եղել վարել իրենց ընտանիքի մեքենաները մի քանի հարյուր կիլոմետր՝ հարձակումներից ընտանիքը փրկելու համար: Այս բռնի տեղահանությունն ազդել է երեխաների կյանքի վրա՝ նրանց զարգացման, հոգեբանության, կրթության, առողջության, հատուկ կարիքների, ներառյալ՝ հաշմանդամությունից բխող կարիքների վրա :Այս երեխաների մոտ հայտնաբերվել է սթրես, վախեր, քնի հետ կապված խնդիրներ և այլն:

Արցախի ՄԻՊ հատուկ զեկույցի համաձայն՝ պատերազմի հետևանքով շուրջ 40 հազար երեխա է տեղահանվել:

Այս հարկադրված տեղահանությունը միակ տարբերակն էր փրկելու նրանց կյանքը:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ

ՄԱՀՎԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՇԵՄԻՆ

Հիշում են երեխաները

«Բախտներս բերեց, որ կիրակի էր, թե չէ որ գնայինք դպրոց, շատ վատ կլիներ...»,- Արցախյան երկրորդ պատերազմի մասին առաջինը սա է ասում 8-ամյա Մերին, հետո հիշում, թե ինչպես հենց սեպտեմբերի 27-ին իրենց տան հարակից անտառում սարսափելի աղմուկով ինչ-որ բան պայթեց: Կրակոցները շատ մոտ էին, ու իրենք ստիպված էին հեռանալ:

-2-ամյա Լինան մոր հետ մահվան ճամփով է հասել Երևան, նա առանց պատճառի լացել է օրեր շարունակ: Լինայի ընտանիքը Մարտակերտից է, հայրը պայմանագրային զինծառայող է, Ապրիլյանի մասնակից: Մայրը՝ Մելանյա Մելքումյանը, պատմում է, թե ինչպես են փրկվել. «Ամուսնուս հայրական տունը շատ մոտ է սահմանին, ուղիղ մեր դիմաց էին թշնամու դիրքերը, գյուղերը: Երեք տարի է՝ այնտեղ եմ ապրում ու համարյա ամեն օր նրանց հետախուզական անօդաչուն մեր տան վերևում էր... Ամսի 27-ին արթնացա ամուսնուս բղավոցից, դուրս եկա պատշգամբ, անօդաչուն գլխավերևում էր, գոռաց՝ վերցրու երեխային, իջի առաջին հարկ կամ մտի գոմ: Երեխային օրորոցից վերցրի, իջեցրի առաջին հարկ ու չհասցրեցի էլ բարձրանալ շորեր կամ ուտելիք վերցնելու:

Պատերազմի երեխաները

Տեսանյութ մեր աշակերտ Աշոտի մասին

11-ամյա վարորդը. «Զինուժ մեդիան» նոր տեսանյութ է հրապարակել

https://fb.watch/9mn9cMhhe[3]

[3] https://www.evnreport.com/

ԽՈՍՈՒՄ ԵՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ըստ Արցախի ՄԻՊ հատուկ զեկույցի՝ նախնական տվյալներով հրետակոծություններից, հրթիռային և օդային հարվածներից նյութական վնաս է կրել 71 դպրոց և 14 մանկապարտեզ: Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով փակվել է 220 դպրոց և 58 մանկապարտեզ: Այս ամենի հետևանքով շուրջ 24.000 երեխա զրկվել է դպրոց և 4.000 երեխա՝ նախադպրոցական հաստատություն հաճախելու իրավունքից:

Կարևոր է, որ պատերազմի ժամանակ երեխաները չկորցնեն իրենց ժպիտը:

Նրանք այն երեխաներից են, որոնք հոկտեմբերի 8-ին գտնվում էին Ղազանչեցոցի ապաստարանում ադրբեջանական հարվածների ժամանակ:

ՄԵԶ ՀՅՈՒՐ Է ԵԿԵԼ ՀՈԳԵԲԱՆԸ



- Տիկին Հովսեփյան,ինչն է կարևոր զինված ընդհարումների ժամանակ Երեխաների հետ աշխատանքում

- Երեխաների դաստիարակության գործում կան մի շարք նրբություններ և կանոններ՝

Հարկավոր է լինել սիրալիր երեխայի հանդեպ: Սերը, գուրգուրանքը փոքրիկին թույլ է տալիս զգալ իրեն պաշտպանված, վստահ իր անձի նկատմամբ:Ծնողների պահանջը և ուշադրությունը պետք է լինի մշտական, տրամադրության հետ չփոխի և համապատասխան լինի երեխայի հնարավորությանը: Չի կարելի պահանջել նրանից կատարել իր ուժերից վեր խնդիր: Դա խեղաթյուրում է երեխայի կամքի ձևավորումը, նրա նպատակասլացությունը:

-Իսկ ով պետք է աշխատի երեխայի հետ,ծնողը,ուսուցիչը,թե....

-Հարկավոր է թողնել, որ փոքրիկը ինքնուրույն գնահատի իր արարքը: Նույնիսկ

եթե նա սխալ է գործում, մի շտապեք նրան կանգնեցնել, թողեք թող վերջացնի,հետո նոր բացատրեք, թե ինչը ճիշտ չի արել: Դա նպաստում է փորձի ձեռքբերմանը և բարձրացնում է նրա ինքնագնահատականը:

ՊԱՏԵՐԱԶՄԸ և ԴԵՌԱՀԱՍԸ[4]

Պատերազմը և դեռահասը

Պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում,միջավայրում տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններից բացի,փոփոխություններ են տեղի ունենում նաև մեր ներսում՝ մտքերում,մարմնում,հու

յզերում,վարքում:Կարևոր է հիշել,որ նման դրսևորումներըարտակարգ իրավիճակներում համարվում են նորմալ,բնական և սովորաբար դրանք հաղթահարվում են որոշ ժամանակ անց:Մյուս կողմից մեր հոգեկան աշխարհն ունի դժվար իրավիճակներում մեզ պաշտպանելու ահռելի կարողություններ:

[4] <<Ինչպես օգնեմ ինքս ինձ>>Ձեռնարկ դեռահասների համար

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երեխաների իրավունքները պետք է պաշտպանված լինեն ամենուր,անկախ նրանից ,թե նրանք որտեղ են ապրում:Երեխաները ունեն մեր պաշտպանության կարիքը և մենք ուղղակի իրավունք չունենք անտարբեր լինելու նրանց անհոգ ու բարեկեցիկ մանկության նկատմամբ:

Ցավոք,այսօր, շատ երեխաների առջև ծառացած են մնում բազմաթիվ մարտահրավերներ: Դեռ շատ հաշմանդամություն ունեցող երեխաներ կան, ովքեր ամբողջովին ներառված չեն կրթական համակարգում, հասարակության մեջ, նրանք չեն գտնվում խաղահրապարակներում: Բազմաթիվ երեխաներ գտնվում են երեխաների հատուկ խնամքի հաստատություններում, ի հեճուկս նրան, որ նրանցից շատերն ունեն բարեկամներ և ծնողներ:Երեխաների անպաշտպանվածությունը,ցավոք,այսօր հատկապես արտացոլվում է զինված ընդհարումների ժամանակ,որից անմասն չի նաև Հայաստանը:Հատկանշական է,որ երեխաներն իրենք դա արդեն հասկանում են և հաճախ հենց իրենք են քայլեր անում իրենց պաշտպանելու համար:Այսօր քան երբևէ,երեխաները հնարավորություն ունեն տեղեկատվական բազմաթիվ միջոցների շնորհիվ կրթվել,ինքնակրթվել բոլոր առումներով,այդ թվում՝ ռազմական գործողությունների ժամանակ իրենց պաշտպանվածության մակարդակում:Իհարկե այդ հարցում,երեխաների իրազեկվածության հետ կապված քայլերը պիտի կրեն շարունակական բնույթ:Երեխան պիտի իր հանդեպ հոգածությունը,ուշադրությունը,սերը զգա և վայելի ոչ միայն իր ընտանիքում,այլ նաև իր շրջապատում,դպրոցում,բակում:Կարծում եմ,այստեղ մենք՝ուսուցիչներս,ևս շատ անելիքներ ունենք,որոնք ցանկալի

արդյունքի կբերեն շարունակական ,համագործակցված աշխատանքի արդյունքում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քայլեր ձեռնարկել բարձրացնելու տեղեկատվական դաշտում երեխաների իրազեկվածության մակարդակը:Այնպիսի պայմաններ ու հնարավորություններ ստեղծել երեխայի համար,որ ինքն անգամ ձգտի կրթվելու,ինչի արդյունքում կդառնա ավելի տեղեկացված,պաշտպանված,ավելի հանդուժող,խաղաղասեր և կկերտի իր երազանքների հայրենիքը՝ ԻՐ Հայաստանը:

Օգտագործված գրականություն՝

Երեխայի իրավունքների մասին - Arli

https://hy.wikipedia.org/Միջազգային մարդասիրական իրավունք

հասարակական կազմակերպություն

https://armla.am › wp-content

https://www.osf.am/

https://www.evnreport.comhttp://www.hogeban.info

Ինչպես օգնեմ ինքս ինձ պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում,էջ 5

Ձեռնարկ դեռահասների համար,հեղինակներ՝ Լ.Աղաբեկյան,Ա.Վարդանյան և այլք

www.unisef.org

ԿԻՐԱՌՎԱԾ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ,ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հայտարարություն

Ն պատակ ն ե ր և խն դ ի ր ն ե ր

Երեխայի իրավունքների կարևորությունը

Պատմության մարդասիրական նորմեր

Պատերազմը և դեռահասը